Վերջերս Կահիրեում տեղի ունեցավ մի գիտաժողով «Երկու պետություն մեկ հողի վրա» կարգախոսով, որին մասնակցում էին պաղեստինցի ու հրեա մտավորականներ եւ իսրայելական կենսեցի անդամներ: Այնտեղ ներկա էր նաեւ Իսրայելում արաբական ժողովրդավարական կուսակցության նախագահ, կենսեցի արաբ պատգամավոր Աբդուլ-Վահաբ Դարաուշեն, որի հետ «Ազգ»-ը զրուցեց, որոնք կրճատումներով, ներկայացնում ենք: Հարցազրույցն այնքանով է հետաքրքիր, որքանով լուսաբանում է Իսրայելի ներքին քաղաքական կյանքը, հատկապես պաղեստինա-իրեական փոխհարաբերություններին վերաբերող որոշ հարցեր:



– Ասկսենք Ձեր գնահատականով՝ Վաշինգտոնում ՊԱԿ-ի եւ Իսրայելի միջեւ կնքված համաձայնագրի մասին:

– Մենք ընդունեցինք այդ համաձայնագիրը: Այն շրջանին ավելի լավ առաջարկ է խոստանում եւ նոր հեռանկարներ է բացում ամբողջ Միջին Արեւելքի համար: Այն հնարավորություն է տալիս պաղեստինցուն ուղղակիորեն խոսել իսրայելցիների հետ նրանցից իր իրավունքները պահանջելու համար: Մենք կարծում ենք, որ «Նախապես Գազան եւ Երիքովը» մաս է կազմում սկզբունքների ընդհանուր մի համաձայնագրի: Եւ չնայած այսօրվա մեր տեսած բոլոր դժվարություններին եւ ամոթերին, մենք լիովին համոզված ենք, որ համաձայնագիրը կշարունակի իր առաջընթացը մինչեւ կնքվեցի անկախ պաղեստինյան պետության ստեղծման արաբական արեւելյան Երուսաղեմ մայրաքաղաքով: Սա կարված է որոշ տարիների ընթացքի հետ, հանգի պետք է ասենք, որ համաձայնագիրն իրագործվելու է երկու փուլով: Հնգամյա անցումային փուլը, որի երրորդ տարուց կսկսվի համաձարվիակ (վերջնական փուլի) լուծման բանակցությունը:

– Մտավախություններ կան այն մասին, որ «Լիկուդը» կարող է կրկին վերադառնալ իշխանության, որ կնշանակի տապալել այն ամենը, ինչ առայժմ ձեռք է բերվել: Սա կաղառնա համաձայնագրին:

– Նախ, յուրաքանչյուր կառավարություն պարտավոր է նախորդ կառավարության ստորագրած համաձայնագրերին հետեւել: Սա հասկ է միջազգային օրենքում: Երկրորդ, ես չեմ գտնում, տեսանելի ապագայում եւ խաղաղության գործընթացի առաջխաղացման դեպքում, որ մնական տարիներին հնարավոր լինի «Լիկուդի» վերադարձը իշխանություն, գոնե համաձայնագրի իրագործման եւ անցումային փուլի ընթացքում, հանգի, քան իս, եթե շարունակվեն խաղաղության բանակցությունները, եւ խաղաղ առաջընթաց կատարվի, ապա կավելանա ժողովրդական աջակցությունը Ռաբինի կառավարությանը: Մանավանդ, որ Իսրայելում հիսարկողների 15 տոկոսն արաբ պաղեստինցիներ են, որոնք չեն աջակցելու «Լիկուդին»:

– Դուք իրո՞ք վստահ եք, որ «Լիկուդը» չի վերադառնա:

– Ներկա կառավարության առաջ դեռեւս կան երեք կամ չորս երկուսուկես տարի իշխելու համար եւ նա վստահ է, որ մեծամասնությունն իր կողմն է: Այն դեռեւս օժանդակվում է, նաեւ «Արաբական ժողովրդավարական կուսակցության» (ԱԺԿ) եւ «Խաղաղության եւ հավասարության ժողովրդավարական ճակատի» (ԽՀԺՃ) կողմից: Բոլոր դեպքերում, կառավարությունն այս ժամանակաշրջանում անկման վտանգի տակ չէ: Ուստի Ռաբինը կարող է շարունակել խաղաղության գործընթացը, որոնք կրճատումներով, ներկայացնում ենք: Հարցազրույցն այնքանով է հետաքրքիր, որքանով լուսաբանում է Իսրայելի ներքին քաղաքական կյանքը, հատկապես պաղեստինա-իրեական փոխհարաբերություններին վերաբերող որոշ հարցեր:

մասավոր մտավախություններ:

– Ձեր վերջին հայտարարություններում ասացիք, թե հետ կվերցնեք ձեր աջակցությունը «Աշխատանքի» կառավարությունից, եթե նա չնեանակի արաբ մի նախարարի: Կարո՞ղ եք ավելի խորությամբ մեկնաբանել այս դիրքորոշումը:

– Կառավարական դաշինքն այսօր բաղկացած է 56 անդամից՝ 44-ը «Աշխատանքից» եւ 12-ը «Մերեց» կուսակցությունից, ինչպես նաեւ վայելում է արաբական խմբավորման (ԱԺԿ)-ի եւ (ԽՀԺՃ)-ի 5 անդամների աջակցությունը: Մենք աջակցեցինք այժմյան կառավարությանը՝ իր ստեղծումից ի վեր այն հույսով, որ նա առաջ կմղի խաղաղության գործընթացը եւ ճանաչեք որպես Իսրայելի քաղաքական քարտեզի անմոռանալի մի մաս այնպես, ինչպես աշխարհի որեւէ փոքրամասնության իրավունքներն են իշխանությանը եւ կառավարությանը մասնակցելու գործում: 800 հազար պաղեստինցիներ որպես քաղաքացիներ ապրում են Իսրայելում: Իսրայելի-առաջացումից ի վեր եւ նրա ողջ պատմության ընթացքում ոչ մի արաբ նախարար չի նշանակվել:

– Ո՞ր նախարարությունը կցանկանայիք, եթե բավարարվի Ձեր պահանջը:

– Մեր ուզածը կառավարությունում արաբների ընդունման սկզբունքի հաստատումն է: Կարեւոր չէ, թե դա որ նախարարությունը կլինի, այլ կարեւորն այն է, որ արաբներ ընդգրկվեն կառավարության մեջ: Նրանք մերժում են լոկ մի արաբ նախարարի, թեկուզ եւ առանց պորտֆելի:

– Բայց իսրայելական կառավարությունում կան երկու փոխնախարարներ:

– Սա ճիշտ է: Մեկը առողջապահության, իսկ մյուսը գյուղատնտեսության փոխնախարարներ են, սակայն նրանք լիազորություններ չունեն: Նրանք սոսկ երկու մեծ պաշտոնյաներ են կառավարության մեջ: Մեր այսօրվա պահանջածը կառավարության մասնակցելն է: Փոխնախարարը մասնակցում է որոշումների ընդունման գործին, բայց չի ներկայանում նախարարների խորհրդի նիստերին:

– ԱԺԿ-ն մի կամուրջ էր ՊԱԿ-ի եւ Իսրայելի միջեւ: Չե՞ք կարծում, որ նրա դերն ավարտվեց Վաշինգտոնի համաձայնագրից հետո:

– Այդ դերը չի վերջանում, քանի որ միշտ կարիք կա տեսակետների մերձեցման հարցում: Բավական կարեւոր է Իսրայելում պաղեստինցիների մասնակցությունն արարհրեական համագոյակցության խնդրին: Այդ դերը չի ավարտվում, այլ կունենա որոշ ընթացքներ եւ հեռանկարներ, ինչպես, օրինակ, պաղեստինյան «հետագա պետության կառուցմանը մասնակցելը: Մենք, որպես կուսակցություն, հավատում ենք համագոյակցությանը եւ խաղաղությանը: Մենք գտնում ենք, որ այդ դերն ընդլայնվում եւ մեծանում է, մանավանդ որ ԱԺԿ-ն վերջի ապրող ուժերից մեկն է Իսրայելում:

– Դուք խոսում եք հետագա պաղեստինյան պետության մասին: Այս հարցի վերաբերյալ ոչ ոք չի խոսում, բացի պաղեստինյան ժողովրդից:

– Փոխհարաբերությունների նաեւ իսրայելական հասարակական կարծիքում, կենսեցի անդամների եւ ակադեմիկոսների մեջ: Խաղաղության գործիչները խոսում են պաղեստինյան պետության մասին որպես նախընտրելի եւ բնական այլընտրանքի: Ես համոզված եմ, որ հաղթական լուծումն, անպայման, ի վերջո կհանգեցնի անկախ պաղեստինյան պետության ստեղծմանը Իսրայելի կողքին:

– Դուք հնարավո՞ր եք գտնում հանդիպում կոնֆեդերացիայի կայացումը Հորդանանի, Պաղեստինի եւ Իսրայելի միջեւ, մանավանդ որ Դուք էաս եք խոսում դրա մասին:

– Ես առաջին մարդն էի, որն այս առաջարկությունն իսրայելական կենսեցում ներկայացրի 1987 թ., արդեն 1990 թ. նաեւ երեք ամիս առաջ: Ես պահանջեցի ստեղծել հանդիպում կոնֆեդերացիա Հորդանանի, Պաղեստինի եւ Իսրայելի միջեւ, այսինքն երեք անկախ պետությունների միջեւ, որոնք կհամագործակցեն տնտեսական, սոցիալական, մշակութային եւ ֆինանսական ոլորտներում: Ես դա անվանեցի «միջինարեւելյան Բենիլյուքս», եվրոպական Բենիլյուքսի մեջով, որը կազմված է Բելգիայի, Հոլանդիայի եւ Լյուքսեմբուրգի միությունից: Կենսեցի պատասխանը դրական էր որովհետեւ առաջարկությունը փոխանցվեց անվտանգության եւ արտաքին գործերի հանձնախմբին մանրամասն քննարկելու նպատակով, չնայած իսրայելյան աջակողմյանների առարկմանը: Կան նաեւ դեկավարներ, որոնք հանդիսված ձգտում են դրան: Դրանցից են Իսրայելի արտգործնախարար Շիմոն Պերեսը, Հորդանանի գահաժառանգ Էմիր Հասանը եւ Աբու Մազենը: Այդ գաղափարն ունի աջակցություն է վայելում տարածաշրջանում:

Պատրաստեց
ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԵՍՅԱՆԸ

Դրսերում

Հացադուլավոր հրդեհը պահանջում են դադարեցնել եղեռնը

Լոնդոնի հայկական կենտրոնում դեկտեմբերի 13-ին 50 հրդեհ հացադուլ են հայտարարել: Նրանք պահանջում են, որ Ճուրքիան վերջ դնի «Քրդստանում եղեռնի եւ տեղահանության դադարեցմանը»: Այս 50 հրդեհը նախատեսում են, որ իրենց անձնվեր հացադուլին կմիանան հարյուրավոր այլ մարդիկ: Նրանք պնդում են, թե այս գործողությունը նաեւ բղխում է հարգ ժողովրդի իրավունքների սահմանափակումների դեմ եվրոպական երկրներում, մասնավորապես Գերմանիայում եւ Ֆրանսիայում, կազմակերպություններ ստեղծելուն: «Քրդերը սովորած են եղել գալ այս երկրները, քանի որ նրանք օժանդակում էին Քրդստանի բանվորական կուսակցության առաջնորդությամբ ազգային ազատագրական ժողովրդությունը որտեղ էլ լինեն», նշվում է նրանց հայտարարագրում: Հացադուլավորները նաեւ պահանջում են եվրոպական երկրներից դադարեցնել զենքի վաճառքը Ճուրքիային եւ պահում են բրիտանական կառավարությունից մի պատվիրակություն ուղարկել Քրդստան, որը կվավերացնի այն տիրող իրավիճակը:

Նախագահին կարել զանգահարել

Վարչապետի վերջին հեռախոսազրույցում առանց դժվարության լի է գտնել Լեւոն Վայենասի հասցեն «Նախագահ, կոմուտատոր՝ 21-0 Ուղղակի հեռախոսը՝ 212821»:

Նշված են նաեւ նրա գրասենյակի 19 համարները: Ուղիղ հեռախոսահամարը հրապարակվել է վերջերս:

Նախագահին ոչ միայն զանգահարում են, այլեւ գրում: Վայենասն անձամբ ստանում է մոտ երեքուկես հազար նամակ՝ ավելի քան, քան Լեհաստանի ազգաբնակչության հիմնարկությունը:

Ինչի՞ մասին ասես որ չեն գրում: Լեւոն Վայենասի 50-ամյակի կապակցությամբ Լեհաստանի քաղաքացիներից մեկը հայտնել, «Նոտով կլրանա նաեւ իմ 60-ամյակը: Շատ հաճելի կլինեն այդ օրը բարի մաղթանքներ ստանալ նաեւ պետության դեկավարից»: Հնդկական բազմազավակ մի ընտանիք խաղաղության Նոբելյան դափնեկրին խնդրում է իր համար գնել կովերի մի նախիր, բելգիացի մի էլեկտրիկ՝ դառնալ կնքահայր, ամերիկյան թերթերից մեկը՝ մասնակցել «հանրահայտ մարդիկ եւ նրանց բեղերը» հարցախույզին: Անհրաժեշտ է պատասխանել այսպիսի հարցերի: Բեղերի երկարությունը, ձեւի ընտրությունը, պահելու ժամանակը, եւ թե ինչպես է արձագանքում կինը: Ի դեպ, նման բղխումներն այնքան էլ շատ չեն: Նախագահին հասցեագրված շատ նամակներ նեղացած մարդկանցից են:

Բողոքավորներից ոմանք ստանում են հնարավոր օգնությունը: Մի բանաստեղծ, որը չէր կարող մեկնաբանել բանաստեղծությունները, գրասենյակից ստացավ հնամաշ գրամեքենա:

Լեհական մամուլից

Վրաստանում նույնքան հատում են անտառները

Ինչպես հայտնեց վրացական հեռատեսությունը, հանրապետության անտառտնտեսության դեղարտաքնեն, նախագահ Դավիթ Գիգաուրին, այժմ Վրաստանում տեղադրվում անտառ հատում: «Նրանց մի մասն օգտագործվում է որպես վառելանյութ, իսկ մյուս մասն արտահանվում են Ճուրքիա», հայտնեց Գիգաուրին: Նա նշեց, որ Վրաստանի տարածքի «40 տոկոսը զբաղեցնում են անտառները, որոնք հիմնականում պատսպարանական նշանակություն ունեն: Անտառների հատումը կարող է փոխել հանրապետության գոյապահպանական իրավիճակը: Միայն 1993 թ. անօրինաբար հատվել է 12000 խմ անտառ»: Մասնավորապես բերվեց Վրաստանի Ախալցխայի երջանի օրինակը, որտեղ անտառները մեծ տարածք չեն զբաղեցնում, սակայն վերջերս այնտեղ հատվեցին 50 ամյա տնկիներ: Անտառահատներն իրենց գործողությունները բացատրեցին ձմեռնային պատսպարաստությամբ:

Մամուլ

Սկիզբը էջ 1

Ձերբակալվեց հրդական PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանը

Միաժամանակ նշվում է, որ Ասադը, ստանալով Քլինթոնի ողեր՝ Քրիստոֆերից, սահաբեկիչ գործության իմիջից ձերբազատելու համար նրան տվյալ հարցում աջակցություն է խոստացել: Օրակարգում է Օջալանի հանձնումը բարեական իշխանություններին:

Ինչպես տեղեկացնում է «Ենի Գյունայդը», Աբդուլլահ Օջալանը ձերբակալվելուց հետո հաղարական աղաստան ստանալու ակնկալիով Ֆրանսիա մեկնելու բույլտվություն է խնդրում սխրական իշխանություններից, սակայն վերջինս Սիրիայի վրա ԱՄՆ-ի ու Ճուրքիայի հնարավոր ճնշումների մասավորությամբ մերժում են նրա խնդրանքը:

Այս բանան դարձյալ դեկտեմբերի 16-ի համարում շարադրում է նաեւ «Հյուրրիյեթը» «Ձերբակալվե՞ց արդյոք Ավոն» վերնագրով: Լուրի առնչությամբ ցուցաբերելով հանդերձ չափազանց մեծ զգուշավորություն, «Հյուրրիյեթն» այնուամենայնիվ, բեկուզ ենթադրաբար, ճշտումներ է անում: Ըստ «Հյուրրիյեթի», PKK-ի առաջնորդի ձերբակալությունը կատարվել է Դամասկոսում, այդ մասին Անկարայում իմացել են երեկ երեկոյան, թեեւ գիտցել են նաեւ Չիլլերին, բայց կուցել են նաեւ Չիլլերին, բայց արտգործնախարարությունն ու ռազմական գլխավոր վարչությունը խուսափում են հաստատել դրանք:

Հիրավի, Օջալանի ձերբակալման լուրը ցնցող էր: Սա թե ինչու Օմանարն, ընդհատելով «մամուլի տեսությունը», դիմեց Նահիր Մենթեշին, ստանալով նրանից գործերի նախարարից հետեւյալ պատասխանը. «Ես այդ հարցով զբաղվել եմ ամբողջ գիշեր: Ուշ երեկոյան ինձ հասավ «Ենի Գյունայդի» նախնական համարը: Սակայն հավաստի որեւէ տեղեկություն դեռ չենք ստացել: Այնինչ, սիրիական հարցը: Որից հետո մենք այդ գործին հետամուտ եղանք: Նոպատակ ունենք Ավոյին բանել եւ այդ ավազակին բերել Ճուրքիա: Այս ամենով հանդերձ, նորից եմ ասում, նրա ձերբակալումը հավաստի ճշգրիտ տեղեկություն չունենք իշխանություններ մեզ մոտ: Դեռ չեն հայտնել: Ես նույնիսկ փորձեցի կապվել Սիրիայի ներքին գործերի նախարարի հետ»:

– Հնարավո՞ր է, որ լուրը հավաստի լինի:

– Ինչու չէ, արդեն մենք այդ ուղղությամբ լուրջ աշխատանքներ ենք տանում:

– Հարգարժան նախարար: Ըստ բերքի, Հաֆեզ Ասադի որոշման մեջ կարեւոր դեր են խաղացել Վոլֆան Վարայի եւ Ռուրքն Քրիստոֆերի դիվանագիտական նախաձեռնությունները: Ելնելով դրանցից, կարո՞ղ ենք ասել, որ այս կարգի լուրերի համար կան որոշակի հիմքեր:

– Ինչպես գիտեք, մեծարգո վարչապետը երբ պաշտոնական այցով Միացյալ Նահանգներում էր գտնվում, նա Քլինթոնի հետ բանակցություններում քննարկել է այդ գործին հետամուտ լինելու հարցը: Դրանց հետ մենք մեր գործին հետամուտ եղանք: Ինչպես ասացի, մենք դեռ չենք հայտնել: Ես նույնիսկ փորձեցի կապվել Սիրիայի ներքին գործերի նախարարի հետ»:

– Հնարավո՞ր է, որ լուրը հավաստի լինի:

– Ինչու չէ, արդեն մենք այդ ուղղությամբ լուրջ աշխատանքներ ենք տանում:

– Հարգարժան նախարար: Ըստ բերքի, Հաֆեզ Ասադի որոշման մեջ կարեւոր դեր են խաղացել Վոլֆան Վարայի եւ Ռուրքն Քրիստոֆերի դիվանագիտական նախաձեռնությունները: Ելնելով դրանցից, կարո՞ղ ենք ասել, որ այս կարգի լուրերի համար կան որոշակի հիմքեր:

– Ինչպես գիտեք, մեծարգո վարչապետը երբ պաշտոնական այցով Միացյալ Նահանգներում էր գտնվում, նա Քլինթոնի հետ բանակցություններում քննարկել է այդ հարցը: Որից հետո մենք այդ գործին հետամուտ եղանք: Նոպատակ ունենք Ավոյին բանել եւ այդ ավազակին բերել Ճուրքիա: Այս ամենով հանդերձ, նորից եմ ասում, նրա ձերբակալումը հավաստի ճշգրիտ տեղեկություն չունենք:

Մարտնիրություն

ԳԻՐՔ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սորբոնի հանդիսասրահի մատուռում այս տարվա հոկտեմբերի 28-ին բացված «Կիլիկիայի հայկական թագավորությունը» ցուցահանդեսը նշանակալի երևույթ դարձավ հայ-ֆրանսիական մշակութային փոխհարաբերությունների բնագավառում: Ցուցահանդեսին ներկայացված են Կիլիկիայի մշակույթի և պատմության մասին պատմող բազմաթիվ ցուցանմուշներ, որոնք Արմեն Մութաֆյանի ջանքերով բերվել են աշխարհի այլևայլ գրադարաններից և բանգարաններից: Առաջին անգամ է, որ ճակատագրի հնարանքով տարբեր երկրներում հայտնված այս իրերը հավաքվում են մի տեղում և մասնագետների ու հետաքրքրասեր այցելուների համար սա մի բացառիկ առիթ էր առարկայորեն պատկերացնելու այն Կիլիկիան, որը իրենց խարար տարազ ի վեր նոր է դարձել գիտական հետազոտությունների: Միայն Արմեն Մութաֆյանն իր հսկայական համբերության և աղյուսակավոր պրոտոտիպերի շնորհիվ կարողացավ կյանք տալ այս առարկաներին, մեկը մյուսի հարեւանությամբ դնել իրեր, որոնց մասին տեղեկությունները տրված են տարբեր գրքերում և տարբեր լեզուներով լույս տեսած հետազոտություններում: Այսօր քայլ առ քայլ իր ոնձ նախորդ Ալեքսանդր Ալիշանի չտրտաած արահետներով է հայտնում Արմեն Մութաֆյանը: Մի քանի տարի առաջ նա ընթերցողի դատին հանձնեց «Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում» աշխատությունը, որն ամբողջացնում է Կիլիկիայի պատմությանը վերաբերող մեր գիտելիքները և իրար է շաղկապում և խոսնցնում բանգարանում ցուցադրված, մինչև այժմ համր նյութերը: Գիրքն իր բովանդակությամբ և օգտագործված իրերի նորության տեսանկյունից իսկական հայացք է Կիլիկիայի պատմությունն ընկալելու բնագավառում: Հրատարակությունը կայացել է Ֆրանսիական գրքի ազգային կենտրոնի և Գալուստ Կյուլբենկյան Հիմնադրամի շնորհիվ. հրատարակիչն է Ֆրանսիայի Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնը (CNRS): Նախաբանը գրել է ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, արվեստին, գրականությանը և առեւտրին նվիրված հատվածները՝ Լ. Զաքարյանը, Գ. Շահինյանը և Ք. Օրենը: Եկեղեցու պատմությանը նվիրված հատվածը պատկանում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ի գրչին:

Գրքի 4 գլուխներում Արմեն Մութաֆյանը հանրամատչելի Ներարարանով ընթերցողին պատմում է Կիլիկիա երկրամասի հարուստ պատմությունը սկսելով հնագույն աշխարհագրական նկարագրությունից. Մեծ Հայքի թագավորության հետ ունեցած առնչություններից և հայկական բնակչության տարածաշրջանում հայտնվելուց:

Պատմությունն այստեղ ներկայացված է իր ամբողջության մեջ և առանց ավելորդ զգեստավորումի, թվում է թե ոչինչ հարկ չկա ավելացնելու, բանի որ ամեն ինչ պատմված է իր չափի ու պատմության ոլորտի մեջ, առանց ընթերցողին դույզն ինչ ծանրաբեռնելու ավելորդ փաստերով ու փաստարկներով: Կարծես երազի նման այժիր առջև տահում է Կիլիկյան Հայաստանի պատմության երկարակուս շրջանը: Դրա հետ միասին հեղինակն իր շարադրանքում չի հանդուրժում որեւէ շեղում պատմական ճշմարտությունից եւ գրքում դժվար է գտնել որեւէ լուրջ վիճարկում կամ սխալ: Նրան հետաքրքրում են ամենքնոյ իրադարձությունների նկարագրություններ եւ պատմական հուշարձաններին վերաբերող տեղեկություններ, որոնք լիովին եւ նորը ճանաչում են ընթերցողին: Գիրքն ավելի գրավիչ կդառնար, եթե հեղինակը ներկայացներ Կիլիկիայի թագավորության հասարակական կյանքը, արքունիքի խայտաբղեղ կազմը, համեմատության մեջ դներ Կիլիկիայի արքայական ընտանիքը հարեւան երկրներում իշխող հարստությունների հետ, փորձեր տալ ազնվական եւ զինվորական դասերի կառուցվածքը, քաղաքային ու գյուղական բնակչության, ինչպես նաեւ հոգեւորականության խաղացած դերը երկրի տնտեսական, հասարակական եւ հոգեւոր կյանքում: Արժեր նաեւ անդրադառնալ Կիլիկիայի մնացորդների ողբերգած «Ամենայն հայոց բազավոր» տիտղոսին եւ արժեքավորել դրա նշանակությունը ժամանակի քաղաքական փոխհարաբերություններում:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ը կարողացել է սահմանափակ էջերի մեջ ներկայացնել Հռոմկլայում հաստատված հայոց կաթողիկոսների եկեղեցական քաղաքականությունը հարեւան համայնքների հետ եւ ցնցարկել այն հիմնական դավանաբանական հարցերը, որոնք գայթակղության քար էին դարձել հայն. ասորի լատին եւ հայ եկեղեցու փոխհարաբերություններում:

Մեր կարծիքով չկա սիրով եւ նվիրումով կատարված որեւէ իսկական աշխատանք, որ ընթերցողը չցանկանա ավելի կատարյալ տեսնել: Այդ իսկ պատճառով ոչեմ է շնորհակալ լինել հեղինակների ողջ խմբին եւ հատկապես Արմեն Մութաֆյանին, որը ժամանակի դատին է հանձնել մի աշխատանք, որի գրեթե ամեն էջը ճաշակի, արվեստի ու գիտական բարեխղճության միաձույլ կառույց է:

Սրան պետք է ավելացնել, որ գրքին մեծ արժեք են տալիս առաջին անգամ հրատարակվող կնիքները, առեւտրական համաձայնագրերի բնագրերի եւ մանրանկարների բնօրինակին մոտեցող լուսանկարները: Քեզ Կիլիկիայում եւ պատկերացնում, երբ տեսնում ես Գլոս Ռոլինի եւ Ստեփան Պեռնարի լուսանկարները, որոնք արված են այս գրքի համար 1993 թ. մայիսին: Գրքի բովանդակության հետ համահունչ են Հովհաննես Խաչիկյանի եւ Ժան-Լյուք Փորիեի ստեղծած բարձրակարգ քարտեզները: Իսկ վերջում դրված ժամանակագրական տախտակը, անվանացանկը եւ բնորոշ մատենագիտությունը աղտահովում են աշխատանքի գիտական պատանդները:

ԱՇՈՏ ԲՈՂՈՅԱՆ

Լուրերի հոսք

Բորիս Ելցին-Ալ Գոր հանդիպում

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը ԱՄՆ փոխնախագահ Ալբերտ Գորի հետ հանդիպման ժամանակ խիստ ցնցաստուրեն արտահայտվեց Ուկրաինայի միջուկային զինաթափման հարցի քաղաքականության վերաբերյալ: «Ուկրաինան խաբում է մեզ բոլորիս թե ԱՄՆ-ին, թե Ռուսաստանին, թե Եվրոպային: Նա խաբում է ողջ աշխարհին, իսկ մենք այնքան անօգնական ենք, որ չենք կարողանում դադարեցնել այդ չարիքի դեմ», ասաց Ելցինը այդ ասիրով ճշտերի փոխանակության ժամանակ: Ալբերտ Գորը Բորիս Ելցինին փոխանցեց ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի ուղերձը: Այնուհետեւ զույգն ընթացավ փակ դռների հետեւում, որտեղ ներկա էին Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը, ԱԳՆ նախարար Անդրեյ Կոզիրեւը, ԱՄՆ-ում Ռուսաստանի դեսպան Վլադիմիր Լուկինը: Սնարֆ

ԱՄՆ-ն անհանգստացած է միջուկային զենքերով

ԱՄՆ պետքարտուղարի օգնական Լին Դեյվիսը հայտարարեց, որ իր երկիրն անհանգստացած է նախկին ԽՍՀՄ հանրապետություններից, միջուկային նյութերի եւ տեխնոլոգիաների դեպի Իրան, Իրաք եւ Հյուսիսային Կորեա արտահոսի հնարավորությունից: Նշելով, որ նախկին ԽՍՀՄ որոշ միջուկագեներ այժմ հայտնվել են Մերձավոր Արեւելքում եւ Արեւելյան Ասիայում, Դեյվիսը հայտարարեց, թե «մենք ճշգրտորեն չգիտենք, թե նրանք ինչով են զբաղվում, սակայն ԱՄՆ-ի պաշտոնական շրջանակներն Իրանի, Իրաքի եւ Հյուսիսային Կորեայի հանդեպ տագնապով են լցված»: Նա նաեւ ողջունեց Ուկրաինայի նախագահի այն հայտարարությունը, որով միջուկային զենքի ապակայնացման պայմանագիրը տարածվում է նաեւ CC-19 եւ CC-20 տիպի հրթիռների վրա: ՆՏ

Օմանը կկրճատի նավթահանույթը

Օմանի սուլթանատը հայտարարեց հաջորդ տարվանից նավթի արդյունահանումը 5-10-ով կրճատելու մասին եւ կոչ արեց ՕՊԵԿ-ի մեջ չմտնող մյուս երկրներին հետեւել իր օրինակին: Երկրի նավթի եւ հանքային պաշարների նախարարի խոսքերով, այս միջոցառումը նպատակ ունի օժանդակել ՕՊԵԿ-ի անդամ երկրների ջանքերին կայունացնել էներգակիրների համաշխարհային գները: Նախարարը մտադիր է այցելել մի շարք նավթարդյունահանող երկրներ, որոնք չեն մտնում ՕՊԵԿ-ի կազմում, նպատակ ունենալով իր տեսակետը ներկայացնել այդ կառավարությունների հետ: Ենթադրվում է, որ օմանցի նախարարը կայցելի Ռուսաստան, Նորվեգիա, Մալայզիա եւ եգիպտոս: Լոնդոնյան բիրժայի տվյալներով, հունվարի համար նավթի գինն ընկել էր մեկ բարելի համար 14 դոլարից, մինչդեռ մեկ տարի առաջ այն 20 դոլարի մոտ էր: Արմենպրես-ԲԻԶՆԵՍ ՏԱՍՍ

Սպանվել է Սեւծովյան նավատորմի մամլո խոսնակը

Սեփական տան շեմքում գնդակահարվել է Սեւծովյան նավատորմի մամլո կենտրոնի պետ, առաջին աստիճանի կապիտան Անդրեյ Լազեբնիկովը: Սա արդեն նման կոչման երրորդ սպայի սպանությունն է վերջին երկու ամսվա ընթացքում: Մինչ այդ, Սեւաստոպոլում սպանվել էին ռադիոգործարանի տնօրեն, գնդապետ Վիկտոր Սեմյոնովը եւ Սեւծովյան նավատորմի օպերատիվ ղեկավարման շտաբի ավագ սպա, առաջին աստիճանի կապիտան Վալերի Ավակովը: Այս առիթով Ռուսաստանի ռազմածովային ուժերի մամլո կենտրոնը հայտարարել է, որ «ՌՕՒ» գլխավոր հրամանատարությունն անտարբերությունը չի մնա կատարվող հանցագործությունների նկատմամբ եւ պահանջում է Ուկրաինայի համապատասխան մարմիններից «կարճ ժամկետներում ապահովել քաղաքում իրավակարգը»: Ըստ ոչ պաշտոնական տվյալների, Լազեբնիկովը սպանվել էր մեջքին կրակոցներից: Սնարֆ

Տարբեր

Լիբանանցի գրող Ամին Մահալուֆը արժանացավ Գոնկուրի մրցանակի

Անցյալ տարի ֆրանսիացի գրողներ Էդմոն եւ Ժյուլ Գոնկուրների ստեղծագործական համագործակցությունն առաձնահատուկ երեւույթ դարձավ համաշխարհային գրականության պատմության մեջ: 50-60-ական թվականներին Գոնկուր եղբայրներն ստեղծեցին գրականության գլուխգործոցներ՝ վեպեր, դիմանկներ, պատմության եւ արվեստի վերաբերյալ հետազոտություններ: Ամենատես հայտի է գրողների «Օրագիրը», որում արտացոլում գտան ժամանակակից կյանքը: Գոնկուր եղբայրների եւ նրանց ժամանակակիցների գեղագիտական հայացքները: Էդմոն Գոնկուրի կյանքի համանձայն, նրա ունեցվածքն անցավ գրականության ամենամայա մրցանակների հիմնադրամին: Գոնկուրյան մրցանակը ամենատարածվածն է Ֆրանսիայում եւ դափնեկրին է հանձնվում Գոնկուրյան ակադեմիայի անունից: Այս տարվա մրցանակին արժանացել է լիբանանցի հայտնի գրող Ամին Մահալուֆը:

«Ես, որպես Գոնկուրյան ակադեմիայի գլխավոր քարտուղար, ընտրեցել եմ այն նեսերին, որոնք լուսաբանները կանոնավոր կերպով բաց են թողնում մեր մյուսի հասցեով, եւ դրանում ոչ մի վատ բան չեմ տեսնում: Ընդհակառակը լավ է, որ թնկոզ տարիքն մի անգամ մրցանակաբաշխման նախաօրյակին եւ հետո, Ֆրանսիայի բերքեն ու ամսագրերը լրջորեն գրում են գրականության մասին», ասում է ֆրանսիացի հայտնի գրող, ակադեմիկոս Ֆրանսուա Նուրիսյեն: Իսկ դրանից հետո առաջ նա Գոնկուրյան մրցանակ-93-ի դափնեկիր հայտարարեց լիբանանցի գրող Ամին Մահալուֆին «Դրասն» հրատարակությամբ լույս տեսած «Ծանիս ժայռը» վեպի համար:

«Գոնկուրյան մրցանակը ոչ թե ֆրանսիական է, այլ ֆրանսալեզու, ասում է Նուրիսյեն: Ամին Մահալուֆը լիբանանցի է, սակայն նրա ստեղծագործության լեզուն ֆրանսերենն է»:

Ամին Մահալուֆը հստակորեն համադրասխանում է Գոնկուրյան դափնեկրի դասական կերպարին, որը վերջերս նկարագրվել էր փարիզյան «Էքսպրես» գրական ամսագրում. «35-40 տարեկան գրող, որը հրաժարակել է երրորդ կամ չորրորդ վեպը»: Մահալուֆը արձակագիր է: Երգիծանքը, սար սյուժեներով արձակը. ֆանտաստիկան նրան առայժմ չեն հրաժարում, բեղեռ եւ նրա վերջին «Ծանիս ժայռը» վեպը կառուցված է գրական զանազան ժանրերի խառնուրդով: «Ծանիս ժայռը» արեւելյան հեքիաթառակ է, որում օրգանապես զուգորդվում են պատմությունը եւ առասպելը, իրականությունը եւ մտացածինը: Գործողությունն ընթանում է անցյալ դարի 30-ական թթ. Լիբանանի մեջ, որում այնպիսի կյանքում ալեկոծվում են մարդկային կրքերը, սերը եւ ատելությունը, վրիժառության ծարավը եւ նախանձը... պատկերավոր, խորհրդանշիչորով հարուստ արեւելյան հիստոնեական լեզուն պատմվածին հաստակ ոճ է հաղորդում, լրացվելով փիլիսոփայական մարդասիրական խորությամբ: Հեղինակը հանդես է գալիս Արեւմուտքի եւ Արեւելքի, քրիստոնեությունը եւ իսլամը, անցած հաղորդակցությունները եւ մեր օրերը կատրոի դերում:

«Երբ ինձ հարցրվեց արտահայտել այն բոլորը, ինչ ես զանվանում էի, ապա այդ գաղափարը ինձանով տեղի ունեցավ շնորհիվ ֆրանսերենի, ասաց լիբանանցի գրողը, երբ տեղեկացավ իր հաղթանակի մասին: Մանկությունս գրում եմ, եւ միայն ֆրանսերենով: Այդ լեզուն համապարփակ է»: ■

Քննարկում

Ամերիկյան երգչուհին այժմ էլ Սիբիրում

Տարբեր են լինում արվեստագետները: Իհարկե, նրանց մեծ մասը սիրում է շրջագայել հատկապես երգիչները: Ի՞նչ երգիչ՝ առանց հյուրախաղերի եւ համերգային շրջագայությունների: Բայց նրանց մեջ էլ տարբերություններ կան, դասեր գերադասում են մայրաքաղաքներն ու շքեղ համերգասրահները, մյուսները միշ ավելի համեստ են իրենց պահանջների եւ պայմանների մեջ: Կան նաեւ այնպիսիք (նրանց բավել, ինչ խոսք, ավելի միշ է), ովքեր որոշես իրենց համերգավայր ընտրում են այսպես կոչված, բարդ ու վտանգավոր տեղամասերը եւ հաճույք ստանում հենց նման վայրերում ելույթ ունենալուց:

Նրանցից է 34 ամյա ամերիկուհի Բոբ Մաֆֆարթինի Պոլ Մաֆֆարթինի խորթ քույրը: Թե հիշում է մեր ընթերցողը, աղիոնկյան երկրաշարժից հետո երգչուհին եկավ նաեւ Հայաստան, եւ դրանք ունեցավ մարգահամերգային համապիրում, վշտակցեց մեր ժողովրդին: Վերջերս նա Ռուսաստանում էր. եկել էր «Եվրոպա» ֆիրմայի հրավերով: Օստանկինյան «Երաժշտական կենտրոնում» ծրագրում նկարահանվելուց հետո նա ցանկություն հայտնեց լինել Սիբիրում ընդ որում մի դայմանով միայն՝ համերգներ ունենալ նախկին ԳՈՒԼԱԳ-ի տարածքում: Երիտասարդ ռուս երգիչներ Մարինա Ցվետայի եւ Ռենոյի հետ անվախ ամերիկուհին կտրեց անցավ ողջ Սիբիր, եղավ Նիժնեվարտովսկում եւ Նոյաբրսկում, հասավ գրեթե մինչեւ Հյուսիսային բեւեռ: Դրանով իսկ Բոբ Մաֆֆարթինի դարձավ առաջինը արտասահմանյան երգիչներից, որ եղավ այս հեռավոր շրջաններում:

Պարզ բան է, որ նշված վայրերում տարբերական հարմարությունների մասին խոսք չէր կարող լինել: Աղորում էին անջուր հյուրանոցներում, հանախ էլ՝ նախկին բարաքներում: Դրա փոխարեն ամեն տեղ, որտեղ համերգ էր կազմակերպվում, հանդիսատեսներն այնոյիսի ճոխ ընդունելություն էին ցույց տալիս անդրվկիսանոսյան հյուրին եւ նրա ռուս «գարձնկերներին», որ մոտացվում էին կենցաղային բոլոր անհարմարություններ: Ի դեպ, սիբիրյան այս ուղեւորությանը մասնակցում էր նաեւ Բոբի մայրը կամ որ նույնն է, Պոլի խորթ մայրը Անժելա Լյուսիա Մաֆֆարթինն: Նրա կենսախնդությունն ու հազվագյուտ լավատեսությունն այնքան էր դուր եկել շրջագայող խմբի անդամներին, որ նրան անվանում էին ոչ այլ կերպ, քան «ռոքնռոլ մամա»:

Սա, ինչ խոսք, Բոբի առաջին այցելությունը չէր Ռուսաստան. նա այստեղ էր եղել նաեւ հինգ տարի առաջ: Սիբիրյան այս շրջագայությունից հետո վերջինս հայտարարեց. «Ես վստահ եմ, որ իմ եղբայր Պոլն իր կյանքում երբեք նման ուրախություն չի ճաշակել, ինչպես ես ունեցա Սիբիրում»:

Բոբի հետագա շատ ծրագրեր ունի՝ կապված Ռուսաստանի եւ նախկին Խորհրդային Միության մյուս հանրապետությունների հետ: Չի բացառվում նաեւ նրա եղբոր լեգենդար Պոլ Մաֆֆարթինի այցն այդ երկիր: Հավատանք Սայրի Ջեկսոնի մոսկովյան այցելությունից հետո դա այնքան էլ անիրագործելի չի թվում: Ա. Է.

Գերմանիայի Մյունստեր քաղաքում հայտնաբերվել են Յոզեֆ Հայդնի մինչ այժմ անհայտ 6 սոնատներ դաշնամուրի համար: Այդ նոտաները պահվում էին մոտ 80 ամյա մի կնոջ տունը, որը, Հայդնի հայտնի կենսագիր Ոորինս Լենդնի վկայությամբ, անտեղյակ է եղել ձեռագրերի ներկայացրած մեծ արժեքին: Ենթադրվում է, որ դաշնամուրի նորահայտ սոնատները Հայդնը գրել է 1805 թվին: Ավստրիացի դաշնակահար Վասկուրնն փետրվարի 12-ին Հարվարդի համալսարանում առաջին անգամ կկատարի այս սոնատները: ■

Լուրերի հոսք

digitised by A.R.A.R.@

Խորհուրդ չտալ

Սերգեյ Ստանկեւիչի հրաժարականը

Ռուսաստանի խորհրդարանի ընտրություններից հետո հայտնի դարձավ նախագահ Ելցինի խորհրդական Սերգեյ Ստանկեւիչի հրաժարականի մասին: Անդրադառնալով այս հարցին, Ստանկեւիչի մամլո քարտուղարը հայտնեց, որ նախագահի խորհրդականը, լինելով ազնիվ հեղափոխական, հենց ինքն է առաջարկել Ելցինին ընդունել իր հրաժարականը, քանի որ, որպես հեղափոխական հարցերով խորհրդական, նա կրում էր ընտրությունների արդյունքների պատասխանատվության իր բաժինը: Սակայն Սերգեյ Ստանկեւիչը պատասխանատվություն հայտնեց նախագահի հետ համագործակցելու Ռուսաստանի բարեփոխման գործում: Շեշտվեց, թե Ստանկեւիչը ի՞նչ տեսքով է ներկայացրել նախագահին իր հրաժարականի առաջարկը: Հայտնի չէ նաեւ, թե այժմ որտեղ կաշխատի Սերգեյ Ստանկեւիչը, սակայն մամլո քարտուղարը հիշեցրեց, որ Ստանկեւիչը մի շարք պատասխանատու դիրքեր է զբաղեցնում Ռուսաստանի միասնության եւ համաձայնության կուսակցության (ՊՌԵՍ) ղեկավարությունում: Նա գլխավորում էր Պետական դումայի ընտրությունների ՊՌԵՍ-ի մոսկովյան շրջանային ցուցակը, սակայն առայժմ Ստանկեւիչի ընտրության մասին տեղեկություններ չկան: Սնարֆ

Ժիրինովսկին ավելի շատ է եղել եթերում

Համաձայն ռուս-ամերիկյան տեղեկատվական մամլո կենտրոնի հետազոտությունների, որը ինքնակոչ էր նախընտրական պայքարի ժամանակ լրատվական հաղորդումները, ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հեռուստաեկրանը, նախընտրական հինգ շաբաթների ընթացքում Վլադիմիր Ժիրինովսկին բոլորից հաճախ է հայտնվել «Օստանկինո», «Ռոսիա» հեռուստաշրջադարձում եւ Պետերբուրգի հեռուստահաղորդումներում: Ժիրինովսկին ստացել է գումարային հինգ ժամ հեռուստաեթեր: Սիեւնույն ժամանակ «Ռուսաստանի ընտրության» ղեկավար Եգոր Գայդարը ստացել է միայն չորս ժամ 52 րոպե: Ամենաշատ ժամանակը հեռուստաշրջադարձում տրվել է կոալիցիոն ուղղվածությամբ կուսակցություններին՝ 43 ժամ, ինչը կազմում է ընդհանուր 43 տոկոսը: Կոմունիստական կուսակցությունը՝ ՌԼԴԿ-ն եւ Ագրարային կուսակցությունն ստացել են միայն 15 ժամ, կամ 16 տոկոս: Հեռազոտության հեղինակները Ժիրինովսկու երեւույթը բացատրում են նրանով, որ «ՌԼԴԿ-ն հստակորեն էր ընդգծել Ժիրինովսկուդերը, որպես իր գլխավոր դաստաղաշտանի եւ կուսակցության մյուս թեկնածուները հազվադեպ էին հայտնվում էկրանին»: Սնարֆ

Հակաֆաշիստական ճակատը կոչում է ընդդեմ Ժիրինովսկու

«Ժիրինովսկին ագրեսիվ է, նա կրպալանի եւ կկործանի ժողովրդին: Ժիրինովսկին գուլագ է, նա երկրի կեսը կտանի դեպի համակենտրոնացման ճամբարներ: Ժիրինովսկին պատերազմ է»: Այդ է նշում երեկ «Ռուսաստանի մարդկանց» իր կոչում ժողովրդական հակաֆաշիստական ճակատի նախաձեռնող խումբը: Հայտարարության մեջ կոչ է արված չհավատալ ՌԼԴԿ ղեկավարի՝ Գերմանիայում մի նմանատիպ դուրսբերումներ ժողովրդին խոստացավ խաղաղություն, ծաղկում եւ բարեկեցություն, սակայն իրականում «Գերմանիան ստացավ պատերազմ, կործանում, վիշտ եւ արցունք: Միջուկային երկրում, ինչպիսին Ռուսաստանն է, «Ուկրաինային, Մերձբալթիկային, Կովկասին եւ Միջին Ասիային ծնկի բերելու նպատակով «ցունամ թափահարելը նշանակում է հարյուրավոր չեռնոբիլներ ստանալ: Ավելին, դրա հետեւանքով կարող է պայթել ողջ աշխարհը», նշվում է դիմումի մեջ, որ ստորագրել են ճակատի հայտնի գործիչներ Ա. Ադամովիչը, Ա. Գերբերը, Ա. Նույկինը, Վ. Սելյունինը եւ Ն. Ֆատեեւան: Նրանք կոչ են արել միավորվել ժողովրդական հակաֆաշիստական ճակատի մեջ, որպեսզի «համատեղ գործողություններով Ռուսաստանը փրկեն ֆաշիզմից»: Սնարֆ

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՆՇԵԼ ՄԵԿԴԱՐՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում օլիմպիական գաղափարների, օլիմպիական շարժման ու սոցիալական արժեքների լայնորեն դրդռզանման նպատակով Հայաստանի Հանրապետությունը եւ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն համատեղ որոշում են կայացրել 1994-1996 թթ. ընթացքում երկու շրջանով միջոցառումներ անցկացնել, նվիրված ՄՕԿ-ի եւ օլիմպիական խաղերի վերածննդի 100-ամյակին:



1-ին շրջանը ՄՕԿ-ի հիմնադրման 100-ամյա տոնահանդեսի շրջանակներում անցկացվելու է 1994 թ., իսկ 2-րդ շրջանի միջոցառումները տեղի կունենան 1995-1996 թթ. եւ նվիրված կլինեն օլիմպիական խաղերի վերածննդի 100-ամյակի տոնակատարությանը: Յուրաքանչյուր փուլում նախատեսվում են մարզական միջոցառումներ, այդ թվում տարբեր մարզաձեւերից հանրապետության առաջնություններ, մարզական տոնահանդեսներ, օլիմպիական վազքուղիներ, մարզահամերգային շոուներ, մարզական տարբեր սեռունդների ներկայացուցիչների հանդիպումներ, ռադիոհեռուստատեսային բեմական ելույթներ, դասախոսություններ, բեմական ցուցահանդեսներ:

Միջոցառումները լայնորեն կլուսաբանվեն լրատվության տարբեր միջոցներով: 1994 թ. դեկտեմբերին եւ 1996 թ. մայիսին կամփոփվեն գրականության, կիրառական արվեստի, երաժշտական լավագույն ստեղծագործությունների, լուսանկարչական աշխատանքների, լավագույն հրապարակումների, հեռուստառադիո հաղորդումների, օլիմպիական բեմադիպլոմով հայտարարված մրցույթների արդյունքներ:

1994 թվականի աղրիլի սկզբին կամփոփվեն բանդակագործների շրջանում Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի եւ Հայաստանի նկարիչների միության կողմից հատուկ կանոնադրությամբ հայտարարված մրցույթի արդյունքները: Երկու հաղթողների լավագույն աշխատանքները դրանավորվում է դրաշնական արարողության ընթացքում հանձնել Օլիմպիական բանգարանին Լոզանում (Շվեյցարիա) եւ Միջազգային օլիմպիական ակադեմիային Աթենքում (Օլիմպոս, Հաղարին հանձնելու համար, Հունաստան):

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն կմասնակցի Միջազգային օլիմպիական կոմիտեի հոբելյանական միջոցառումներին: ■

«Սերեն-Լունակի» ճակատագիրը դարձ է

Մեր թղթակից ԱՀԱՐՈՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ հաղորդում է Փարիզից

Բասկետբոլի կանանց Ֆրանսիայի առաջնություն
14-րդ մրցափուլ

«Տարբ»-«Վալանսիեն»	63-53
«Բլերմոն»-«Շալլ»	71-70
«Բուրժ»-«Ստրասբուրգ»	93-59
«Սերեն-Լունակ»-«Նիս»	54-71
«Մոնֆերրան»-«Ռուան»	64-58
«Միրանդ»-«Էֆս»	70-64

Հերթական մրցափուլում ուշադրության կենտրոնում էր «Տարբ»-«Վալանսիեն», «Միրանդ»-«Էֆս» 4 առաջատարների մրցավեճը: Երկուսում էլ հաջողությունն ուղեկցեց խաղադրապարակի տերերին:

Հերթական պարտությունը կրեց «Սերեն-Լունակը», որը սեփական հարկի տակ ընդունել էր «Նիսին»: Ցիրս է, առաջին կեսում Լյուբով Ալեքսանդրովա-Քոչարյանի եւ Անահիտ Հակոբյանի ջանքերով «Սերենին» հաջողվեց հաղթել (37-34), սակայն 2-րդ կեսում, ոչահնասային-ների կարճ նստարանի պատճառով, խաղադրապարակի տերերին չհաջողվեց դիմակայել մրցակցին: «Նիսի» առավելությունը հատկապես զգալի էր հանդիպման վերջնամասում, եւ փաստորեն հետաքրքրական տարով:

Կրկին «Սերենի» կազմում ամենաարդյունավետը Ալեքսանդրովան էր, որը վաստակեց 17 միավոր: 16 միավոր վաստակեց Անահիտ Հակոբյանը: Ալեքսանդրովա-Քոչարյանը հերթական անգամ արժանացավ բարձր գնահատականի: Նույն բիմերի առաջին մրցավեճում, որը տեղի էր ունեցել մրցակցի հարկի տակ, անհամեմատ հաջող էր խաղացել «Սերեն-Լունակը», որը շնորհիվ Լյուբով Ալեքսանդրովայի եւ Անահիտ Հակոբյանի, միայն համառ դիմադրից հետո զիջել էր 70-75 հաշվով: Այն ժամանակ Ալեքսանդրովան իր բիմին բերել էր 32 միավոր:

Նորից նշենք, որ «Նիսի» կազմում հանդես է գալիս հայազգի եւս մեկ բասկետբոլիստուհի, Ֆրանսահայաստակ Կարինե Արաբյանը (170 սմ): Վերջինս «Սերենի» հետ առաջին շրջանի խաղում վաստակել էր 10 միավոր, այս անգամ Լունակում բերեց 4 միավոր, սակայն անընդհատ խաղադրապարակում էր եւ խաղը կազմակերպողներից մեկը:

Ինչքան էլ հայաստանցի բասկետբոլիստուհիները փորձում են իրենց նվիրված խաղով օգնել «Սերեն-Լունակին» մտնելու ուժեղագույն ութնյակ, երեւում է, դա չի հաջողվի: «Սերենը» 14 հանդիպումներում ընդամենը 1 հաղթանակ է տարել եւ եզրափակում է մրցաշարային աղյուսակը:

14-րդ մրցափուլում ամենաարդյունավետը նախկին ԽՍՀՄ հավակնորդ եւ Նովոսիբիրսկի «Դինամոյի» կենտրոնական խուզաբանը էր, որը վաստակեց 32 միավոր:

Առաջնության ամենաարդյունավետ խաղացողները.

1. Ստինսոն («Տարբ»)	362
2. Նեմցովա («Մոնֆերրան»)	295
3. Խուդաբովա («Բուրժ»)	289
4. Սանտանինը («Էֆս»)	285
5. Բրուֆորդ («Բուրժ»)	254
6. Ալեքսանդրովա («Սերեն»)	250
7. Նազարենկո («Շալլ»)	248
8. Տոնս («Վալանսիեն»)	243
9. Պավլովիչ («Ռուան»)	235
10. Հասավ («Ստրասբուրգ»)	234
11. Սլավչեւա («Միրանդ»)	227
12. Ֆիալկովկի («Բլերմոն»)	215
13. Հակոբյան («Սերեն»)	211

Առաջնության աղյուսակը
14 մրցափուլից հետո

	Մ	Խ	Հ	Պ
1. Տարբ	25	14	11	3
2. Միրանդ	25	14	11	3
3. Վալանսիեն	24	14	10	4
4. Էֆս	24	14	10	4
5. Բուրժ	23	14	9	5
6. Շալլ	23	14	9	5
7. Բլերմոն	22	14	8	6
8. Ռուան	20	14	6	8
9. Նիս	19	14	5	9
10. Ստրասբուրգ	16	14	2	12
11. Մոնֆերրան	16	14	2	12
12. Սերեն	15	14	1	13

Աշխարհի գավաթ-94

Ներկայացնում ենք մասնակիցներին

ԻՍՊԱՆԻԱ

Տարածությունը՝ 504 748 հա. կմ
Բնակչությունը՝ 38 400 000
Մայրաքաղաքը՝ Մադրիդ
Ֆեդերացիան հիմնադրվել է 1913թ.
Միջազգային ֆեդերացիայի անդամ է 1904 թ.
Ֆուտբոլով զբաղվում է 343 600 մարդ
Ալբոմների թիվը՝ #1314
Աշխարհի առաջնություններին մասնակցել է 8 անգամ (32 խաղ, 13 հաղթանակ, 7 ոչ-ոքի, 12 պարտություն, գնդակները՝ 43-38): Լավագույն ելույթը՝ 4-րդ տեղ (1950 թ.):
Աշխարհի 15-րդ առաջնության ընտրական փուլում ընդգրկված էր եվրոպական 3-րդ խմբում, որտեղ մրցակիցներն էին Իռլանդիայի, Դանիայի, Լատվիայի, Լիտվայի, Ալբանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի հավաքականները: Արձանագրել է հետեւյալ արդյունքները.

Իսպանիա-Իռլանդիա	0-0, 3-1
Իսպանիա-Լատվիա	5-0, 0-0
Իսպանիա-Լիտվա	5-0, 2-0
Իսպանիա-Հյ. Իռլանդիա	3-1, 0-0
Իսպանիա-Դանիա	1-0, 0-1
Իսպանիա-Ալբանիա	3-0, 5-1

Եվրոպական 3-րդ ընտրական խմբի ամփոփիչ աղյուսակը

	Մ	Խ	Հ	Ո	Պ	Գ
1. Իսպանիա	19	12	6	3	0	27-4
2. Իռլանդիա	18	12	7	4	1	19-6
3. Դանիա	18	12	7	4	1	15-2
4. Հս. Իռլանդիա	13	12	5	3	4	14-16
5. Լիտվա	7	12	2	3	7	8-21
6. Լատվիա	5	12	0	5	7	4-21
7. Ալբանիա	4	12	1	2	9	6-26

Հավաքականի մարզիչն է Խավիեր Կլեմենտեն (Իսպանիա)

Հավաքականի կազմը.

դարպասապահներ
Սուրիսուրեսա, Կանիզարես

պաշտպաններ
Ֆերրեր, Կամարասա, Ալկորտա, Գիներ, Նանդո, Լասա, Գուերերո

կիսապաշտպաններ
Հիերո, Գոյկոչեա, Նադալ, Բակերո, Ամոր, Կամիներո, Միչել, Գուարդիոլա.

հարձակվողներ
Լուիս Էնրիկե, Սալինաս, Կիկո, Մանոլո, Կիկե Էսպերանց:

Ջրագնդակ

Արման Միխայելյանը Ֆրանսիայի հավաքականի մարզիչ

Մարսելի ջրագնդակի բիմը Ֆրանսիայի ուժեղագույն ակումբներից մեկն է եւ հանդես է գալիս եվրոպական երկրների գավաթի խաղարկությունում, որտեղ մրցակիցներն են Հռոմի (Իտալիա), Բեոլինի (Գերմանիա), Պրիմորյեի (Խորվաթիա) բիմերը: Մարսելցիների ավագ մարզիչն է Ֆրանսիայի նախկին չեմպիոն Արման Միխայելյանը, որը գլխավորում է նաեւ Ֆրանսիայի ազգային հավաքականը:

Ըստ Միխայելյանի, իր բիմը լավ է նախապատրաստվել եվրոպական մրցաշարին եւ ոգեւ է որ հաջողություն ունենա: ■

Բոցնգամարտ

Անսովոր հաղթանակը

Մեքսիկայի անվանի բոցնգամարտիկ, ծանր քաշային Խուլիո Սեզար Շավեզին, որը համարվում է աշխարհի բացարձակ չեմպիոն (բոլոր քաշային կարգերը միասին) եւ դրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 87 մենամարտում 87 հաղթանակ է տարել, մարզական աշխարհ մուտք է գործել 11 տարեկանում ծեծելով մի աղջկա:

Այսպիսի հայտարարություն է արել բոցնգամարտիկ Խուան Անտոնիո Լոդեսը. «Քույրս, որ 14 տարեկան էր, ծեծում էր քսանի տղաներին: Մի օր ես մրցավար էի, երբ քույրս ռինգ դուրս եկավ Խուլիոյի դիմաց: Շավեզն այն ժամանակ 11 տարեկան էր: Փոքրիկ տղան անընդհատ հարվածներ էր տեղում նրա կրծքին: Ի վերջո, ցավերին չդիմանալով, քույրս բողոքեց ասպարեզը:

Դեռ այն ժամանակ զգացի, որ Խուլիոն օրերից մի օր մեծ աստղ կդառնա», ասել է Խուան Անտոնիո Լոդեսը: ■

Նոր դրոշի ցանկություն

2000 թ. օլիմպիական խաղերը Սիդնեյում անցկացնելու որոշումը բնականաբար ոգեւորել է ավստրալացիներին: «Ավստֆլագ» միությունը, որը դրոշակում է Ավստրալիայի նոր դրոշի համար, մրցույթ է հայտարարել: Լավագույն նոսխագծի հեղինակը կարժանանա 20 հազար դոլար դրամի: Մինչեւ այսօր Ավստրալիան օգտագործում է Union Jack անունը կրող բրիտանական դրոշը: «Բայց հիմա ամեն մի ավստրալացի 2000 թ. օլիմպիական խաղերի ընթացքում ոգեւ է հանդես սեփական դրոշ ունենալու կարեւորությունը», հայտարարել է «Ավստֆլագի» նախագահ Հարոլդ Սկրոբին: Վերջինս տեսակետը բաժանում է նաեւ Ավստրալիայի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Ջոն Կոստեսը: Բայց, ըստ The Australian թերթի, Ավստրալիայի բնակչության միայն 35 տոկոսն է ազատ վերաբերվում դրոշի: ■

Բանվոր վարում է ԱՍՏՐՈՆ ԲԱՐԴՈՒՄՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԲԺԻՇԿ ՋԵԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ ԴԱՐՁՅԱԼ ԲԱՆՏՈՒՄ

Լուսինյրիդ դրես գործակալությունը տեղեկացնում է, որ Միլիգանի նահանգում աղյուսի բուսակառուցիչ Ջեկ Գեւորգյանը մեկ ամսում 2 տղ անգամ բանտ է մտել միեւնույն մեղադրանքով «ինքնաադանության օժանդակություն» անբուժելի հիվանդությամբ տառապող հիվանդների, ադ հակասում է նահանգի օրենքին: Հայազգի 65 տարեկան բժիշկը ցարդ օժանդակել է 14 հիվանդների ինքնասպանությանը: Վերջին «օժանդակությանը» նա կատարել է հոկտեմբերի 22-ին, Ռոյալ Օք բնակավայրում գտնվող իր տան մերձակայքում վառած հարկաբաժնում, Լուկենիրիի հիվանդությամբ տառապող Մերիան Յուեդերիկի նկատմամբ: Նա մահացել է Գեւորգյանի ներկայությամբ, վերջինիս դատարանում զորձիմի միջոցով կարողոն մոնոմախել ներշնչելով:

Շրջանային դատավոր Ջերալդ Ռոզենը 50 հազար դոլլարի տուգանք է նշանակել բժշկի դեմ: Լսելով այդ մասին, Գեւորգյանը գոռացել է «Իսկ ինչու՞ ոչ 1 միլիոն: Դուք տրան քաղաքակիրթ հասարակությո՞ն եք կոչում»:

Գեւորգյանի դատաքարտուղար Մայքլ Շվարցը հայտարարել է, թե իր դատարանյալը հացադուլի է դիմել բանտից ազատ արձակվելու դահանջով: ■

ARMINKO LTD

«ԱԶԳ» օրաթերթը հաղորդվում է ԱՄՆ «ԱՐՄԻՆԿՈ» ՍՊԸ-ի համակարգչային կապով:
Հեռախոս. 7-8852-281425
Ֆաքս 7-8852-285082
E-MAIL INTERENT: ROOT. YEREVAN@REX.IASNET. COM

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության «Հոլիկական ավիաուղիներ» ավիաընկերության տնօրինությունը հայտարարում է օդանավերի ուղեկցողուհիների փաստաթղթերի ընդունելություն: Կարող են դիմել 18-28 տարեկան հասնելի առաջին տիպերով բոլոր այն աղջիկները, որոնք ազատ տիրապետում են հայերեն, ռուսերեն եւ որեւէ մեկ այլ օտար լեզվի: Անհրաժեշտ է ներկայացնել ծննդյան եւ կրթության վերաբերյալ վկայականների դրամները, օտար լեզվի իմացությունը հաստատող փաստաթուղթ (առկայության դեպքում), տեղեկանք բնակավայրից. 2 լուսանկար (4-6), ցանկալի է նաեւ լուսանկար ամբողջ հասակով: Ընդունվել ցանկացողները կարող են դիմել դեկտեմբերի 10-ից հունվարի 20-ը հետեւյալ հասցեով: Սայաթ Նովա 10, «ԼԵՎՈՆ ՅԵՐԱՆԵԼ» Երեւանի գրասենյակ, ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, ժամը 10-17-ը:

Արտաքին հոսք

Ռուսաստանում կանխատեսվում է բնաբդահիդանական աղետ

Դարավերջին Ռուսաստանում փաստորեն առողջ մարդ չի մնա: Այս անմխիթարական հեռանկարն են արել Մոսկվայում օրերս լույս տեսած «բնաբդահիդանական իրադրության ազդեցությունը Ռուսաստանի բնակչության առողջության վրա» մենագրության հեղինակները: Նրանք արձանագրում են, որ երկրում անշեղորեն աճում է մահացությունը սուր շնչառական եւ աղեստամոքսային վարակներից, բնածին անկանոնություններից, սակավարյունությունից, սդիտակարյունությունից, այլ հիվանդություններից, որոնք կապված են վատթարացող բնական դայմանների հետ: Ավելի քան 3 մլն. մարդ բունավոր օդ է շնչում: Երկու ռուսաստանցուց մեկը խմում է վարակված ջուր: Բնաբդահիդանական եւ դրա հետ կապված տագնաբդալի բժշկաժողովրդագրական իրավիճակը դահանջում են անհապաղ միջոցառություններ: Հեղինակները նդատակահարմար են համարում Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնների միացումը Առողջաբդահության համաշխարհային կազմակերդության «առողջ քաղաքներ» նախագծին: Սնարֆ

Ռուսաստանում աճում են իրավախախտումները

Այս տարվա անցած 11 ամսվա ընթացքում Ռուսաստանում ավելի շատ տնտեսական հանցագործություններ են կատարվել, քան ամբողջ անցած տարվա ընթացքում: Ինչպես հայտնի դարձավ Ռուսաստանի ՆԳՆ մամլո կենտրոնից, անցած ժամանակաշրջանում կատարվել է 34882 հափշտակում: Պետական դիրքի չարաշահման դատճառով կատարվել է 13827 հանցագործություն, որից՝ 4128 կաշառակերության դեպքեր, ինչը 1/3-դով ավել է անցած տարվանից: Առեւտրական կետերից կատարվել է 133000 հափշտակություն եւ գողացվել է 90000 տրանսդորտային միջոց. Սնարֆ

Էստոնիան դետք է զինվի

Դեկտեմբերի 15-ին Էստոնիայի Պետական ժողովի դաշտդանության կոմիտեի նախագահ Ռեյն Հելմեն հանրադետության վարչադետին հայտարարություն արեց Էստոնիայի բանակում ստեղծագործության անբավարար հանակության վերաբերյալ: Մեկնաբանելով իր հայտարարությունը, դրն. Հելմեն նշեց, որ Ռուսաստանում սովող իրավիճակը դետք է բացի նրանց այլերը, ովքեր վերջին տարիներին դնդում էին, թե Էստոնիային ընդհանրադես դետք չէ բանակ եւ զենք: «Մեր փոքր հանրադետությունը դետք է դաշտդանված լինի: Եթե մենք մեզ չդաշտդանենք, ապա ոչ ոք մեզ չի դաշտդանի», հայտարարեց դաշտդանության կոմիտեի նախագահը: ԵՏ

Էդուարդ Շեւարդնաձեն զգուշավոր է

Վրաստանի ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեն շարունակում է ձեռնդան մնալ Ռուսաստանի ընտրությունների արդյունքներին ասելով, որ «Դետք է իրադարձություններից ասաջ մնանք: Ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի», ասաց նա դեկտեմբերի 16-ին, ուսանասխանելով մասնավորապես այն հարցին, թե ինչ հետեւանքներ կարելի է սպասել Ժիրինովսկու կուսակցության ամենի համար անհասանելի հաջողություններից: Սնարֆ

Վրացական դարգեւներ ուկրաինական զինվորներին

Պատերազմի ուկրաինական ժողովրդական միության մարտիկներին, որոնք մարտնչել են սրխասների եւ կազակների դեմ, դարգեւներ են տվել: Հրամանագիրը ստորագրել է Էդուարդ Շեւարդնաձեն: «Վրաստանի կառավարությունը, սպաց ուկրաինական ազգային ընտանիքի գործերի նախագահ Վիկտոր Սեգինին, դարգեւատրել է մեր 30 հրաձիգներին, որոնք մասնակցել են ռուս-վրացական հակամարտությանը: Շնորհել ենք 2-րդ եւ 3-րդ կարգի դարգեւներ: 7 զինվորներ դարգեւատրվել են հետմահու»: ԵՏ

ՏՐԱՆՍԱՎԻԱ

կատարում է բեռնատար ավիափոխադրումներ

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ-ԵՐԵՎԱՆ-ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ուղերթով:
Դեկտեմբերի 18-ին ժամը 8.00 եւ դեկտեմբերի 22-ին:
Սանկտ-Պետերբուրգում ադահովվում է դահեստավորումը:

Տեղեկությունների համար դիմել Վարդաշեն 3-րդ փողոց 28 տուն: Հեռախոս 45.53.54, 77.36.39 ժամը 11.00-17.00:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՍՆԱՐՔ
լրատվական գործակալությունը հայտարարում է բարգմանչի մրցույթ դուսերենից անգլերեն:

Տեղեկությունների համար դիմել 52.20.72, 52.20.34

Հասցեն Երեւան, Խաչատրյան 28

ՀԱԼԾ AGBU

«Արամ Խաչատրյան» համերգասրահ

Դեկտեմբեր 31

ՏԱՐԵՄՈՒՏԻ ՏՈՆԱԿԱՆ ՈՒՐԱԽ ՀԱՄԵՐԳ

Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ
Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր
ԼՈՐԻՍ ՃԳԵԱՎՈՐՅԱՆ
Ծրագրում հանդես կգան երաժշտություն Ժան դարտ, Թյուլանդուհի, վիճակախաղ
Կխաղարկվեն «Ալադին» տիպի նվագարվաներ, մագնիտաֆոն, հեռախոսներ եւ այլն
Տոմսերի նախնական վաճառքը դեկտեմբերի 20-ից
Տոմսերի արժեքը 10 դրամ
Վիճակախաղի տոմսերը վաճառվում են տոմսարկղում
Արժեքը 1 դրամ
Համերգի սկիզբը ժամը 11-ին

ՕՄՍԿ

«ՆՈՅ» ԲԱՆԿԸ

Բնակչությունից եւ իրավաբանական անձանցից ընդունում է ավանդներ եւ դեպոզիտներ 3-6 ԱՄՍՈՎ եւ վճարում է տոկոսներ հետեւյալ պայմաններով.
դրամով կամ Ռուսաստանի 1993 թ. ռուբլով
1 ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ 15 %
3 ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ 45 %
6 ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ 100 %
տարադրամով
(ամերիկ. դոլար, գերմանական մարկ)
ԱՄՍԱԿԱՆ 5 %
Դիմել մեզ Երեւանի հետեւյալ հասցեներով՝

Հանրապետություն 67, հեռ. 56-51-07
«Ամի» հյուրանոց 507, 514 սենյակներ, հեռ. 59-45-09, 56-49-30
Գ. Խով 23, հեռ. 46-25-27
Մարշալ Բաղրամյան 79, հեռ. 27-05-18

PUBLISET

ՈՍԿԵ ԱՍՏՂ

ԳՐԱՎԱՏՈՒՆ

★★★★★★★★★★★★★★★★★★★★★★★★

«ՈՍԿԵ ԱՍՏՂ» ԳՐԱՎԱՏՈՒՆԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՎԱՆԴՆԵՐ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ՎԱՐԿԵՐ ԴՐԱՄՈՎ

3 ամիս 70%
6 ամիս 180%
12 ամիս 500%

★★★★★★★★★★★★★★★★★★★★★★★★

Մեր հասցեն՝ «ԱՆԻ» հյուրանոց 511 սենյակ
«ԷՐԵԲՈՒՆԻ-2» հյուրանոց 420 սենյակ
Հեռ. 594-511

NAAVI
AVIACORPORATION

«ՆԱԱՎԻ» ավիաընկերությունը առաջարկում է

Բեռների երկկողմանի տեղափոխում
ՕՄՍԿ-ԵՐԵՎԱՆ-ՕՄՍԿ
երթուղով: Գները տուկայականից նկատելիորեն ցածր են:
Մոտակա չվերթը կկայանա դեկտեմբերի 21-22-ին:

Բեռների տեղափոխում
ԵՐԵՎԱՆ-ՕՄՍԿ-ԽԱԲԱՐՈՎՍԿ
երթուղով: Տոմսերը վաճառվում են: Մոտակա չվերթը կկայանա դեկտեմբերի 25-ին: Սենք սպասում ենք Ձեզ հետեւյալ հասցեով՝
«Սեւան» հյուրանոց, 120 սենյակ.
Տեղեկությունների համար զանգահարել՝ 56-49-78, 58-26-53

ՊԵՏՐՈՍՅԱՆ & Կ°

դասագրքերի ձեռնարկություն

Ընդունվում են ավանդներ հետեւյալ դայմաններով
1 տարով 320 %
8 ամսով 180 %
4 ամսով 80 %

Բարձր տոկոսներ եւ հուսալիություն:

Մեր հասցեն՝
Մարշալ Բաղրամյան դող., 17 տուն:
Հեռ. 56-35-99

PUBLISET

ՀՀ կառավարության «Պարբերական հրատ. տպարան. Երեւան 23 Արշակունյաց 2 Գրանցման թիվ 55. Դասալ 69149. Տպաքանակ 25 000. Պատվեր 1657 Ստորագրված է տպագրության՝ 16. 12. 1993

digitised by A.R.A.R.@